ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԾԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով՝ նախատեսվում է կառուցել 400կվ էլեկտրահաղորդման օդային գծի մեկ հենասյուն:

Ուստի հենասյան կառուցապատման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Լծեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<Բարձրավոլ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության կատեգորիայի վարելահողերից 0.01397հա հողամասը փոխադրել՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի
քաղաքաշինության և փնտեսության ոլորտը
համակարգող բաժնի պետ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
04.10.2019թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԾԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Լծեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<Բարձրավոլ էլեկտրացանցեր>> ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության կատեգորիայի վարելահողերից՝ 0.01397հա հողամասը փոխադրել՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի
քաղաքաշինության և փնտեսության ոլորտը
համակարգող բաժնի պետ՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
04.10.2019թ